

ՊԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐԱՌԻԹԻՒՆ

Պոչկարիւն	համար
Տարեկան	12 Ֆ.
Վեցամսեայ	6 "
Արժույթը	15 "
Վեցամսեայ	8 "

Ստերիկայի	համար
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 "

Ծանուցում տող ստա-
րին երեսին համար 40 ս.
խի վերջին երեսի հա-
մար 20 ստերիկ է. երե-
ֆեկ աւելի անգամներու
համար 20 Օ/Ս զեղջ կըլ
լայ:

ՇՆԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՊԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐ Տ՝ ԲԱՎՈՒԻ ԶՈՐԵՔԵՐՈՒԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ

սկի և ցրտի դրկի,
ագրոսթուսի հաս
ցիկն.

Redaction du journal
"Charjoun"
Varna (Bulgarie)

Արժույթը համար
ձեռքի
(20 ՕԱՆԹԻՐ)
Պոչկարիւն համար
ձեռքի
(15 ՕԱՆԹԻՐ)

Գրութեան և լեզուի տնօրէն

«ՇՆԱԲԱԹ»-Ի ԲԱՎՈՒՆՈՐԻ ԳՐՈՒՆՈՂԸ ԲԱՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՈՎԲԵՐ ԵՐ ՄԵՐ ՆԵՐ ԿԱՅ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Անցեալ յօդածով խոստացանք
ապացուցել որ մեր ներկայ սո-
ցիալիստները կապ չունեն հայ
ժողովրդի հետ և չեն էլ կարող
ունենալ, նախ քան այդ ապա-
ցուցելը աւելի լաւ կը լինի պար-
զենք որ մեր անցեալի սոցիա-
լիստները նոյնպէս իրենց առա-
ջին գործը համարեցին հայի մէջ
ազգային անկախութեան գաղա-
փարը զարթոցեցնել և զէնքը փա-
ռաբանել:

Մեր սոցիալիստների նախա-
հայրը Միքայիլ Նալբանդեանն է,
միևնոյն ժամանակ ամենախիղ-
նացիտնալիստը. նրա ամբողջ
գրածքները ներկայումս են ազգա-
յին զարթումի և ինքնուրոյն
կեանք ստեղծելու գաղափարին,
բացի «ներկայ գործութիւն»-ից,
որը միակ կարեւոր գրածքն է
սոցիալիզմի ոգով: Նալբանդեան
իր սոցիալիստական գաղափար-
ները ընդունեց Եւրոպայում,
բայց հայ ծնված և հայութեան
մէջ ապրած ու հայ ծով քաւերին
մտակիր տեղեակ լինելով, նա
իր ամբողջ ճիգը թափեց հայի
ստրկական քունը փարատելու և
անասնական վիճակից դուրս գա-
լու գործին մղում առ: Ըմբռնեց
որ անզլիացի պրոլետարիատը
այնպիսի պայմաններում է ապ-
րում, որ, էվոլյուցիայի օրէնքով,
աստիճանաբար զարգանալով՝ ա-
ռանց մեծ ցնցումների մի ժա-
մանակ պէտք է հասնի իր բազ-
մանքներին, իսկ ստրուկ և օ-
տարի լծի տակ անասնացած հայը
նախ պէտք է օտարի լուծը թօ-
թափելու միջոցները ձեռք առնէ,
որոնք են հրացան, վառօդ և
զնդակ, մեր մի քանի ուղղմելի
սոցիալիստների համար ծաղրելի
այդ ազատութեան գործիքները:
Նալբանդեանից յետոյ, 80-90
թւականներին, ռուսական զըպ-
րոցներում և համալսարաննե-
րում կրթութիւն ստացող հայ

երիտասարդների մէջ երեսացին
սոցիալիստներ, որոնք նախ ձեռք
ձեռքի աւած գնացին ռուս սո-
ցիալիստների հետ, ապա հայ-
րենիք փերագառնալով և մտնե-
լով հայ ժողովրդի մէջ, տեսան
հայկական կեանքի գառնութիւնը
և ըմբռնելով որ իրենց այդ
կեանքից գուրս գործելը մի տե-
սակ դաւածանութիւն է հայի
հանդէպ, ներկայից և ազգային
յեղափոխութեան:

Յետոյ մի փոքրիկ խումբ երի-
տասարդներ հաւաքված արտա-
սահմանեան կրթութիւն ստանա-
լու, ենթարկվեցին սոցիալիզմին,
որ այդ միջոցին Եւրոպայում ա-
ւելի մեծ քայլերով էր առաջա-
դիմում և որոշ տեղերում բաւա-
կան զգալի յաղթանակներ էր
տանում: Բայց սրանք էլ տես-
նելով որ իրենց ժողովուրդը նախ
ազգային ինքնուրոյն և ազատ
կեանքի պէտք ունի, որոշեցին
ներկայի ազգային յեղափոխու-
թեան, գրանցից մի քանիսը
տաճկահայաստան մտնելով, բո-
լորովին մի կողմ թողին սոցիա-
լիզմը և ժողովրդին մղեցին դէ-
պի զէնք, որովհետեւ օտար բռ-
նութիւնը տապալելու միակ մի-
ջոցը զէնքն էր և է, բայց ոչ
բերան արած Մարկսիզմը: Սը-
րանք բոլորն էլ թէ գաղափար
ունէին սոցիալական յեղափոխու-
թեան վրա և թէ սոցիալիստներ
էին, բայց ըմբռնեցին որ Սուլ-
թանի և քրդերի դէմ կուրի կա-
րելի է միայն զէնքով, գրա հա-
մար էլ մարքսիզմը մի կողմ թո-
ղին և զէնք վերցրին ու զէնքը
փառաբանեցին:

Մեր այս թուած սոցիալիստնե-
րը այդպէս եղան, որովհետեւ
հայ էին, հայի զգացմունքներ
ունէին և օտարամտութիւնից
յաղթված չէին:

Բայց վերջերս լոյս հն ընկել
նոր հայ սոցիալիստներ, որոնք
կամ ռուսացած, կամ վրացիա-
ցած և կամ ուրիշ ցեղի գոյն ու
նկարագիր ստացած հայեր են:
Մշտապէս կտրված լինելով բուն
հայ ժողովրդից, նրա կեանքից,

անված օտար ոգով, անձանթ
հայի հոգեբանութեան ու ձրգ-
տումներին և զուրկ քաղաքացի-
ական արիւթիւնից արհամար-
հում են մեր ազգային գոյու-
թեան համար մղված պայքարը,
նրա հերոսներին ու գործիչ-
ներին: Սրանք ծաղրում են հայ-
կական ազատամբութիւնը, հայի
անցեալը, ներկան և ապագան:
Այդ թուլամորթները ծաղրում
են հայի զէնքը, որովհետեւ ի-
րենք չեն կարող բռնել այդ վը-
տանգաւոր գործիքը, որովհետեւ
չեն կարող մասնակցել այն պայ-
քարին, ուր կեանքի, ապագա-
յի, ինչքի զոհողութիւնը ան-
հրաժեշտ է:

Դրանց համար ծաղրելի են
Գարեբաղիւնները, Լաֆայետները,
Վաչինգտոնները, Դեմոկրէտները
Թոյարիսները, Լէվսկինները, ո-
րոնք թէեւ ժողովուրդներ աղա-
տեցին, բայց սոցիալ դէմոկրատ-
ներ չէին: Դրանց համար ոչինչ
են մեր Պետտիերը, Բարկէնները,
որովհետեւ դրանք սոցիալ դէ-
մոկրատներ չէին:

Թերեւս այս հերոսները սոցի-
ալական յեղափոխութեան վրա
գաղափար չունէին. բայց ունէ-
ին մի աւելի մեծ և իրենց ծա-
մանակի պահանջներին յարմար
գաղափար — այսինքն ամեն մի-
ցեղ պէտք է ազատվի իրեն ա-
նասնութեան հասցնող օտարի
լծից, որպէս զի կարենայ կա-
նոնաւոր կերպով յառաջագիմել
և իրեն համար ընկերային եր-
ջանիկ կեանք ստեղծել: Եւ մեր
տհաս, նորելուկ սոցիալիստները
այս ճշմարտութիւնը ըմբռնելու
անկարող են: Անկարող են, ո-
րովհետեւ օտարացած են. հայ
ժողովրդից հեռի են և Կրիստոսը
միշտ հեռու են փախչում, որով-
հետեւ նրա մէջ ապրել և առանց
զոհողութեան գաղափարական լի-
նել չէ կարելի:

ՎԱՐԳՈ

ՄՐԶ ԼԳԱՎ Ք ՖԻԼԻՊԷՆ

ԱԶԳԱՊՈՒԿ ԹԷ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէի թագային գործերը վարող
մասնախումբը Առաջնորդական խնդ-
րին առթիւ աղերս առկայակոչեց մը
ուրեց խաղալ, բայց ճշխեցաւ:

Սոստովանելով հանդերձ մեր մաս-
նախումբին ինչ ինչ օգտակար կող-
մերը, ասանկ խնդիրներու մէջ, որ
զուտ ժողովրդական, ընկերական ո-
գի կը կրէ, զուրս կուգայ անոնց
աղաչական կողմը: Եւ առի բնա-
կան է անանկ մարդոց համար, ո-
րոնցմէ շատերուն քով կը պակսի
հասարակութեան այս կամ այն պա-
հանջները, այս կամ ձգտումները ըմ-
բռնելու կարողութիւնը:

Մեր մասնախումբը դժբաղաւոր
ըմբռնած չերեւիր սա ամենատարա-
կան բանը թէ՛ Առաջնորդ մը այս
կամ այն աղային համար չէ որ պիտի
ընտրուի, այլ բուն ժողովուրդին հա-
մար ծարրեր խնդիր, եթէ Վահան
վարդապետը կրնարուի առ բանին
համար և Հայր Սուրբն ալ կը ձգտի
անոր...
Եւ սակայն ժողովրդին օտաջնորդը
աղաներուն ֆիլիպով ր պէտք չէ որ
ընտրուի, այլ ժողովրդին կամքովը,
ուրեղովը:

Ասոնց հիմովին հակառակ ըն-
թացք բունց մեր մասնախումբը:

Վասնաւ ուրիշ տեղեր առաջնոր-
դական խնդրին առթիւ, եթէ բաղ-
ձացուած ձևով լայնօրէն շարժուե-
ցան հասարակութեան իրաւունքնե-
րը, գունէ 30-60 հոգիներ ներկայ
գտնուեցան, խորհրդակցեցան, ըն-
տրողներու ցանկ պատրաստեցին,
պատգամաւորութեան յարմար մար-
դիկներ նշանակեցին. սա ամենը
ըրին:

Ինչ կը յուսաք որ ընէ մեր մաս-
նախումբը:

Փոխանակ մինչև հիմա գրուածնե-
րէն, յայտնուած կարծիքներէն օգ-
տուելու և աւելի լայն սկզբունքնե-
րու վրայ զննելու գործը, բոլորովին
հակառակը վարուեցաւ:

Վահան վարդապետի առաջին ան-
գամ հոս գալուն — երբ քօթըլիմանե-
րը և գովեստները կը շարունակուէին
վարդապետէն՝ Մասնախումբին, Մաս-
նախումբէն՝ վարդապետին — այն առեւ
իրենք իրենց մէջ որոշեր են ո-
րոշ գումար մը յատկացնել առաջնոր-
դական ծախքերու...
Աս անգամ ալ, Մասնախումբը իր
կողմէն պատգամաւորի քանդիտա կը

նշանակէ երեք հոգի — որոնց մէջ մի- նակ մէկ յարմարագոյն անձնաւորու- թիւն կայ. Տ. Գրիգոր Թամարեանց, իսկ ծիծաղելիին՝ հոն կայ նաև մարդ մը, Մասնախումբի անդամներէն և անշուշտ Մասնախումբին քանդիտան, որ ամէնատարական հասկացողու- թիւնը չունի աս գործին և չի գի- տեր ոե՛ք կարծիք յայտնել և զայն պաշտպանել և արդէն կարծիք չու- նի, բացի վաճան վարդապետինը գերազանցող կեղծ ժպիտներէն:

Մասնախումբին նշանակած երեք քանախումբերը, ինչպէս նաև ընտ- րողներու անկատար ցանկը — որոնց մէջ տանակներով անուններ չկան — կը կախուի եկեղեցիին դուռը ըն- ջրուքնան օրէն հազիւ նրիֆ-ջոյս օր առաջ...

Եկեղեցին արդէն մարդ չեթար, հրապարակին վրայ ազդեր չեն ցու- ուած, ոչ ոք տեղեկութիւն չունի:

Ժողովուրդին ձայնը ներկայացնե- լու ի՞նչ աղերս միջոց. անանկ չէ՞, Բայց ասի շատերու աօրթի տուաւ կարծելու որ, աղերս օւղակալու մըն է որ կը խաղցուի ինչպստա՛ վա- ճան վարդապետի, անշուշտ նախապէս խորհրդակցելով: Եւ աս կարծիքը աւելի ամուրցաւ մէջս, երբ ուրաթ գիշեր տեսայ որ վաճան վարդապետը յանկարծ բուսաւ...

Հասարակութեան խորհուրդը, խոր- հրդակցելու միջոց շարունակաւ: Տը- տուե՞լը սկսած էր պտտել հասարա- կութեան մէջ և կրնար բանով մը արտայայտուիլ: Բարեբաղդաբար պատգամաւորներէն մէկ-երկու հաս- կըցողները կը հրաժարին և ասի ա- ճահովաբար ո՛չ թէ աս պարտակա- նութիւնը կատարել չուզելուն հա- մար այնքան, որքան ժամանակ վաս- տըկելու համար:

Եւ այսպէս ընտրութիւնը մ'աց ա- նորոշ ժամանակով:

Ինչքի՞ր է թէ երկրորդ անգամ ալ ա՛ս ձեռով պիտի ըլլայ:

(1) Հարկ է նախնական խորհրդակ- ցութիւն մը ընել, ուր որքան կա- ռելի է շատ բազմութիւն մը ըլլայ և աղաներով չի սահմանափակուի, ար- նետաւորն ալ, երիտասարդն ալ հոն սեղ ունենան: (2) Նշանակուին հաս- կցող, կարծիք մը պաշտպանել կր- ցող պատգամաւորներ: (3) Ընտ- րութեան օրը առնուազն 15 օր ա- ռաջ ծանուցուի ազդերով և աշխա- տուի որ ամէն մարդ իմանայ:

Ասոնք օրինաւորութեան ամենա- տարրական բաներն են, որ պէտք է գործադրուի:

Հոս ալ գիտակից տարրը վաճան վարդապետին համակիր չէ, տիրող կարծիքը ներքեւ Եպիսկոպոս Ասլան- եանին կողմն է, որ նշանակուած առաջնորդներուն մէջ յարմարա- գոյնն է մեր գաղութը կառավարե- լու (իբր կարող և փորձառու մարդ) եթէ սակայն, մեր ալ պատգամաւո- րը, հակառակ հասարակութեան իդ- ձին ու շահերուն, չուզէ չիբ անկա- խութիւնը կորսնցնել...

Տեսնենք ի՞նչպէս պիտի վերջանայ Ապրո

26 Օգոստոս Ժիլիպէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սալմաստ, 28 յուլիս 8903

Բարեբաղդաբար մեր ձեռքն անցաւ Իրաւունքի 48րդ համարը, որի մէջ Պ. Հրայրը յաւակնութիւն է ունե-

նում իբրև թէ ճշմարտութիւնը ե- րեւան հանելու: Նրա կարծիքով, կովկասի թերթերում լոյս տեսած, ներքեւ ճշմարտութիւնները մասին, բոլորն էլ զուտ ճշմարտութիւններ են և և այդ բանին իբրև պատճառ, բերում է «Իրօջակ»-ի անցեալ տարւոյ իբրև թէ խոստովանութիւնը դրանց հա- մար: Մի անգամ ասել ենք Ե. Պարն- եալ կրկնում ենք, որ ենթադրութիւն մասին գրածները լիջն են եղել շին- ծու և և նրա դրական փաստերով: Այդ պատճառով համար չատ հե- ոուն չենք ուզում երթալ, վերց- նենք հէնց Հաֆթվաճի անցեալ տար- լայ սպանութեան փորձը մի ինչ որ հէքիմի վրայ, որ պ. Հրայրը վե- րագրում է ենթադրութիւնը — կուսակ- ցական անուն շահագործողներին կամ յեղափոխական զիջակի տակ ծածկ- ւածներին: Ինչպէս և նախ պ. Հրայ- րից քաջութիւնը անհնայ դուրս գա- լու ասպարէզ Ե. այդ անյայտ յարա- գործութիւնը երեւան հանէ (փաստե- լով և ոչ թէ ցնդարանութիւններով): Պրանով նա նախ՝ ազատած կը լինի Հաֆթվաճիցիներին անտեղի տու- ցանքից և ապա՝ մեծ բարութիւն ամբաստանւած և գիւղացիներին:

Մի բան մեզ համար մտն է մտնում, այդ «ենթադրութիւն» անունը ըմբռնողու- թիւնն է. Իրաւունքի պ. Հրայրի պատմածները ենթադրութիւն մասին բացարձակ կերպով յատկացնում է Դաշակցութեան ու Արմէնականու- թեան, իսկ պ. Հրայրը այդպէս չէ հասկանում. նա այդ անունը ասլիս է իբրև թէ յեղափոխութեան դի- մակի տակ ծածկուածներին և ոչ թէ Դաշակցութեան կամ մի այլ կուսակցութեան. այստեղ պ. Հրայ- րի ամենակեղտոտ վարմունքը պարզ երեւում է. ինչու՞ պ. Հրայր չը հերքեց «Իրաւունք»-ի սխալանքը, կամ եթէ ընդունում էր այդ թերթի անարգ գատովճերու, ինչու՞ ապա հրապարակաւ ուրանում է Դաշակ- յութեան և ստորունութեան ամենա- յայտնի փաստը չէ: Բանի որ պ. Հրայրը յիշեալ յօդուածում իրան սկոչումն ըմբռնող թղթակիցն է ա- նուանում, իրան տեսչառ և ան- կողմնակալ է երեւակայում. ուստի հարկաւոր էր հրապարակով ուրանալ կամ զղջալ, Գաղով «Իրօջակ» խոս- տովանութեան ենթադրութիւնը գոյու- թեան մասին, այդ ճիշդ է և մենք էլ չենք ժխտում և չենք էլ ժխտի- ուրիչ կուսակցութիւններին մասին չեմ կարող ասել, իսկ ինչ վերաբե- րում է Դաշակցութեանը կարելի է հրապարակաւ ասել, որ Դաշակցու- թիւնը յանցաւորներին, շարագործ- ներին և զեղծումներ գործողներին ամենախիստ կերպով պատժել է, պատժում է և կը պատժէ, փաստիբ այդ բանի համար շատ կան, միայն հարկաւոր է յիշել մի քանի տեղոր- ները՝ կատարւած թէ այս տարի և և թէ անցեալներում: Պ. Հրայրը բար- կանում է, որ մենք յիշում ենք Փա- յաջուկի հնչակեաններին սխալագոր- ծութիւնը և սեղանում, որ զըր- ւած չի եղել. ընդունում ենք, որ նա գրել է «Նոր-Դարում»: Դա մի- այն բառական չէ ժողովուրդի հա- մար, արդեօք այդ մեծ յանցանքի համար մի ամենափոքր պատիժ տըր- ւեցաւ. շարագործներին. այդ խնդ- րում պ. Հրայրը մեղաւոր չէ, քոյց որպէս «կոչուելը ըմբռնող թղթակից»

թող կամ բացատրութիւն պահանջէր կամ պատժել առաջարկէր, եթէ ըն- դունում էր հնչակեան աղբիւր վար- մունքը իբրև շարագործութիւն (գո- նէ «Նոր-Դարում» խոստովանել է): Եթէ պ. Հրայրը ենթադրութիւն սրբ- տացաւ հակառակորդն էր, պէտք է այդ բանն անէր: Ենթադրութեան պաշտպան գոյց է Հրայրների մտքից անցնի լինել և և երեւում էլ է նրա լուսութիւնից (Փայաջուկի դէպքի մա- սին է խօսքս):

Եթէ Հրայրները գրածները մի ո և է ազդեցութիւն ունենային ժո- ղովուրդի վրայ, չենք կարծում այս- տեղ յեղափոխութիւն մնար. ժողո- վուրդը գիտէ ճանաչել յեղափոխա- կանին և ենթադրութիւնը և գնա- հատում էլ է մաքուր յեղափոխու- թիւնը: Իսկապէս ժողովուրդն ու- թախանում է. երբ մի բան գրած է լինում իսկական ենթադրութիւնի դէմ իսկ ստութիւններն ու զրպարաւ- թիւնները ժողովուրդը զգեւելով է կարդում:

Թէ Դաշակցութիւնը օրէցօր ծա- ւաւում է Սալմաստում, իսկ միւս կուսակցութիւնները վանվում են, այդ բոլորը գիտեն: Օրինակ ինչով կարելի է բացատրել Փայաջուկիցի- րի միտանակալ այ անընդհատ պայ- քարն ու կուրսը հնչակեաններին դէմ մինչև անգամ զէնք վերցրին ու զուրս քշեցին, իսկ այժմ մի քանի անգամ Դաշակցութեան զիջակից և ինչորոշ յետոյ, հազիւ կարո- ղացան դաշակցական տղերք տանել իրանց գիւղը: Միթէ այնքան կոյր էք պ. Հրայր, որ այդ բոլորը չէք տեսնում. կամ եթէ տեսնում էք, կհիշոտաբար թագցնել ու ծաղրել էք ջանում, որով զոք խելկատակու- թեան ամենախոյտառակ դերն էք ստանձնում: Ինչու՞ համար Սալմաս- տի մի քանի պիղեր, ամենախիստ կերպով մեթոցին ընդունել Հնչակ- եանութեան ներկայացուցիչ Ջիվախեանին, որին Մուլաթեանն (Թեմիս առաջնորդ) առաջարկում էր իբրև ուսուցիչ և ծածկում էր նրա կուսակցական լինելը, որպէս զի գիւղացիք ընդունին, բայց էլի ոչ մի տեղ չընդունեցին: Մուրառեանն էլ ասիոյով Սալմաստ ուղարկեց, ա- ռանց գիւղացիք հաւանութիւնն առ- նելու, կամ ալ խօսքով, բռնու- թեամբ ուսուցիչ նշանակեց այդպեղ: Պ. Հրայր, խնդրեմ ասացէ՛ք, այդ լոյն է նշանակում, այդ բանում էլ թող ձեր հիւանդոտ ու զատանցող ուղեղը մի բացատրութիւն թխէ, բայց իրականութիւնն այն է, որ Դաշակցութիւնը յարգում է ժո- ղովուրդից. իսկ Հնչակեանութիւնը ոչ, այդ էլ ի հարկէ հիմնաւոր պատ- ճաւելով:

Իդէպ չը մտնանք յիշել Պ. Ջի- վախեանի այս տարի գործած մի տա- րօրինակ վարմունքը որ իսկոյն ընորջում է հնչակեանների տիպը: Պ. Ջիվախեանը Սալմաստ այս տա- րի երկու փոքրիկ ներկայացում տը- ւեց, որոնցից գիւղացիներին ստւելով, մօտ 40 թուական արդիւնք սկտք է ստացում լինէլ. այդ փողը և աս- մենայն բարեխղճութեամբ յատկաց- րեց հնչակեան կազմակերպութեանը. և այդ էլ այնպիսի մի գիւղում, ուր հոգւէ թէ լուած լինէր Հնչակ- եանութիւնը, բացի այդ, գիւղացիք մինչև այժմ էլ Ջիվախեանի և իւր ընկերների ոտճիկ պարտքը դեռ չեն տուել: Զեղ եմ հարցնում, պ. Հրայր, ի՞նչ անուն կարող էք տալ գրան,

ուսուցիչները պարտքի տակ թողնել իսկ ներկայացման փողը յատկացնել հնչակեան կազմակերպութեան: Գո- նէ Հնչակեանութիւնը Սալմաստում կամ Սալմաստում մի գործ կատա- րած լինէր. էլի չէինք մեղադրի, բայց առանց ժողովուրդին մի շօշա- փիլի օյուտ ապու, նրանից փող դուրս կորդիլ այդ էլ յանցանք է: Իսկ Դաշակցութեան այստեղի ծաւալելը և փառաւոր գործունե- ութիւնը, միայն պ. Հրայրի նման կեղծ ոչ-կուսակցականները նախան- ձից աչքերը փակում են և չեն տես- նում. առանց դրան էլ իրականու- թիւնը մնում է միշտ իրականութիւն:

Տղա կ-Ս Ղաւսցի

Պուրէլ 20/2 Օգոստոս 1903

Պուրէլէն — Պըլթոյ լայն տարա- ծութեան մը վրայ տափարակ դաշ- տերու շարունակութիւն մըն է: Իսկ Գործընդուն կախի կարօտա լեռներու շրթան, որոնք հետզհետէ կը բարձրանան ծովէն 2000 մէթրօ բարձրութեամբ մինչև սահմանագ- լուխ: Փլէտիայ) քաղաքը: Այդ լեռներու շարքին վրայ կը տեսնուի րնակարի տեսարաններ: Երբ ակնարկ մը նետենք իրիտ ան- ստանբուլ և բարձրաբերձ լեռներու վրայ, կամ երբ կը մտնենք Սեւ ան- տառայ մէջ՝ քարածայտերու վրայն կը տեսնուին երկու գրայց ազգերու թուանիտը և Ա. սար. Հունգարիոյ գեղեցիկ վայրեր, անտառայ մէջն ըլխող պաղ աղունքները, որոնց պտո- կալը և հոսիլը հաճոյք կը պատ- ճանեն անտառէն անցնողներուն:

Երկաթուղոյ շարք մը կը սողայ կանցնի այս ձորերուն մէջն, իր և սակը թողով մուխի կուտակներ մի- նակ:

Այս գիրքերու շարքին մէջ կը տեսնուին կազի ամբարներ, ասի- տակի և սիւսի ֆապրիքներ և ու- րիչ գործարաններ: Այս անտառնե- րու վրայ կը տեսնուի կէս Լուսինը, որ մշանջնակալ կը կարծուի իր փայլուն գեղեցիկ կը ժպտի անտառի խորք արող կեանքին: Այս տեղ հա- րուաւոր և աղքատ ուրախ ու զուարթ են. կատարեալ ազատութիւն և եր- ջանկութիւն կը վայելին:

Այս լեռանց կողքին մօտ կը գտ- նուի Սինյաս քաղաքը, Բուսանիոյ Գարոյ թաղաքի ամառանոցը: Եր կը կորուի Փեղիշի ֆիօշի, իր աղի- ճէն հոսող գետին անուշովը, որով սկունքները շատ հետու չեն: Այս խիտ անտառներու մէջ շինուած կան գեղեցիկ ճամբաներ, որոնք կը տա- նին դիւրութեամբ այլ և այլ պատ- մական վայրեր և զուարճալի տեղեր: Հոս ամէնաչքեղ և հիանալի են թագաւորի և թ. գուհւոյ դղեակները. բանաստեղծական ճաշակով շի- նուած են: Ասոնց զարդերն ու կան կարասիները գրիչով նկարա- րել անկարելի է:

Ակնտակ մը նետենք այս տեղացի ժողովուրդի վրայ և բազա- տենք հայ տառապեալ ժողովրդի հետ: Բուսնէն ժողովուրդը Ազատ և եր- ջանիկ է ու ամէն գիւրութիւն ունի- րկաթուղի շօշէ. երկքտարակալ լըս, և բնութեան քաղցրութիւնը սու հիմուտները... Հոս ել գիր տա- զեր և մուղիքի ձայնները արձագան- կուան այս անտառում ձորերու մէջ:

Գիշերային երկքորական լույսերը անասուններու խորը իրերէ կուտին կը փայլին և զուարթ ժողովուրդը պար կը բռնէ անոնց չուրջը:

Իսկ մենք՝ հայերս, այսօր տարածուած օտար երկիրներու մէջ, երբեք տասարդ և ծեր, տխուր ու վշտալի ենք:

Մենք հայերս՝ պէտք է նախանձիքը բուռն ժողովուրդին: Աստուծոյ իրաւունք ունին երջանիկ կուշուելու, որովհետեւ 50 տարի առաջ ունին ճիշտ մեր հիմնական վիճակը և այս գեղեցիկ դրամատան մայրերուն մէջ կենդանութիւն և Պայազիաներու յաջորդները բոյն դրած էին և բուժանելու ժողովուրդը պաշտպաններու ձեռքը խաղաղութիւնը պարծած էր:

Կը ստակար արիւննուշտ թորքերու ֆէսերէն ու շարժաններէն: Երբ կը փախէին անասուններու խորքերէն Վամա վիտի թուրջին (այսինքն ինչ կուշու) գոչելով և ժողովուրդը վախի ու սոսկումի մէջ թողած էր ամէն ինչ ներշնչութիւններու ձեռքը: Վերջը ցնցվելով, կամաց կամաց ուժեր հաւաքելով, զենք առած, ազատութեան սիրով վառուած, ամէնքը մէկ զենքի դիմած ու վստած են այս արեւմտեան վայրերի ցեղը, շատ մը թուրք ջարդելով այս մութ անասուններուն մէջ: Ֆէսերու աէրերը բազմաթիւ լէշեր թողած՝ փախուստ առած են: Այդ ժամանակ փառք տալով Աստուծոյ՝ պարգած են եւազոյն դրօշակը ի նշան յաղթութեան իրենց հայրենի երկիրը մաքրելով վայրենի ցեղէն և ստոր համար է որ բուժեն ազգը իր ճակատին քրտինքով կուտէ իր հացը, մի քիչ աշխատութեան փութարէնը: Օրն ի բուն զուարթ դայալիկներ, սիրոյ զուարթագին կը գերու և պարերու շարքը կը մխթային ծեր անասունները և բարձր ծառերը՝ տխուր անցեալին ահանախները՝ որոնք կարծես ահանաջիկ կը փախան թէ՛ «ոնք ահանասան վկայեր ենք այս մութ անասուններու մէջ թափուած քրտինքայ արեւնց համար:»

Հոս կը տեսնուին վրասակ վանքեր ու պատեր՝ հին բարբարոսութեան հետքեր: Տեսայ վանքի մը մէջ ծեր ֆալալիք մը (ճգնաւոր) 93 տարեկան որ պատեց թուրքերու բարբարոսութիւնը, ամէն իսկ վրդովեցին և քանդեցին մեր ճգնաւորն ու եկեղեցւոյ պատը: Մենք փախանք լեռները և վերջը փոխադրուեցանք, երբ խաղաղութիւն եղաւ և թուրքերը վանելով մեր եկեղեցւոյն շորոքութիւնը լրացուցինք:

Այս ծերը իր սրտին մէջ իս կը պահէ մինչև հիմակ:

Թագաւորին ամառանոցին անջին գեաներու կան 1876-1877-ին պատերազմի թերաւութիւնը, որոնք Փլէնանայէն բերուած են, և թաղան, տապաններ, և անոնց զործածած զենքերը, իսկ այս տեսարաններու բոլորտիքը կան գոյնզգոյն ծաղիկներ ու զարդեր, որոնց տեսքը հիւանայի է: Յեղափոխութենէ վերջ ազատութիւն պատերազմէ վերջ յաղթանակ: Ինչ գեղեցիկ հարստութիւն և ինչ գեղեցիկ փառք: Լայրին՝ ծիծաղ, գերութեան կատարեալ ազատութիւն յաջորդելն է աս, երանի՛

անոնց, և երբ մենք եւս օտար երկիրներու մէջ ազգային և անոնց հետ ազատութիւն վայելող հայերս բարի նախանձ ունենանք, մենք ևս մեր ճիգերը թափենք ու ուժ տանք հայ յեղափոխութեան ու համբերներ մի քիչ նեղութեանց, միութեամբ աջակցելու և օգնելու՝ ա՛յն մարդ իր կարողութեանը ամենատ, քիչ ատենէն մենք ալ կը նմանինք բուժեն ազգին:

Ա. Պ.
Յ. Գ.
Հոս ալ վերամշակութիւնը հայ ազգի մօտ է: Մի քանի օրէ որ կը դրիմ սեղուցս թողականութեան, դպրոցի եւ եկեղեցւոյ մասին:

Նոյն
... Խմբագիրը հետաքրքիր ազգագրութիւն լրագրի

Երբ միայն հայոց իրական վարձարանի խնամակալութիւնն պատիւ ունի խնդրել, որ հաճիր ձեր թերթին մտակալ թիւերէն մէկուն մէջ զետեղել ներկայեալ հայտերս:

21 Օգոստոս 1903 Երևան
Ի իրանց Խնամակալութեան
Վասն Աստուծոյ
Պաննագրութեան
Մ. Գալափեան
Բ. Երևան
(Կնիք)

ՀԱՇՎԵՑՈՅՑ
ՇՈՒՄԼԱՅ ԶԱՅՈՑ ԻԿԱՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Սիպտեմբ. 1902-11 Օգոստ. 1903

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Փոխառութիւն', 'Տօնախմբութիւններէ', 'Նուէրներէ', 'Հանդէս և ներկայացում', 'Ս. Մանուկի և Ս. Զատիկի գանձանակէն', 'Հանգուցեալ Հ. Գէպէր Եղաւորացեանի կտակէն', 'Աշակերտութեան համար', 'Թողական խորհուրդէն', 'Պատերազմի շորոքութեան համար', 'Ս. Մարի Գալափեանին', 'Պարտք խնամակալութեան', 'Ս. Մարի Գալափեանին', 'Պարտք խնամակալութեան', 'Ս. Մարի Գալափեանին', 'Պարտք խնամակալութեան', 'Ս. Մարի Գալափեանին', 'Պարտք խնամակալութեան', 'Ս. Մարի Գալափեանին'.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Մաքրութեան թուղթ, կաւիճ, փոստի ծախս ևն', 'Մանկագրատեղի համար գոյգեր', 'Ապակի և մանր շորոքութեան', 'Պատ մը և գուռ մը շինելու և պատ մը նորոգելու համար', 'Պարտքի վճարուած', 'Աշակերտութեան հիմնարկէն', 'Գանձելի', 'Առնելիք', 'Գումար. 1802.60'.

Ի իրանց Խնամակալութեան
Վասն Աստուծոյ
Պաննագրութեան
Մ. Գալափեան
Ա. Գ. Թաղապետ
(Կնիք)

ՓՈՒՐ ԹՂԹԱՏԱՐ
ՕՐՈՒՍ, ԽՆԴԻՐԸ
Յօ
Ֆիլիպի 21 Օգոստոս

Ֆիլիպի մէջ, մտքերը յուշող և զբաղեցնող խնդիրը եկեղեցական կալուածներու գրառումն է:

Հասարակութեան մէջ ձգտումներ կ'երեւան ինչ որ կարելի է՝ ընելու, բաւական է որ նախաձեռնակներ ըլլան:

Եւ հարկ է որ ատ քայլը աւելու մասնախումբէն և հարուստներէն, երիտասարդները պատ պատրաստ են:

Հարկ է նաև որ, մեր ընելիքները իրենց ուժը չի կորսնցնելու համար, ամէն քաղաք միևնույն ձևով և միևնույն տեղերը բողոքէ:

Կարժէ որ զիտանք, օրինակի համար, Վառնայի մէջ տեղի ունեցած խորհրդակցութեան արդիւնքը:

Կրնանք միմիկներ կազմել, կրնանք նաև լանձնախումբերու միջոցաւ միայն հասարակութեան արամագրութիւնները արտայայտել:

Արքան շուտ շարժինք, ա՛յնքան նպաստաւոր է:

Եւ անգամ մը որ Պուլկարոյ մէջ առաջին քայլը առնուի, ամէն քաղաքի հայրութիւնն ալ պիտի հետևի. և մեր ֆիլիպի մասնախումբին ու հարուստները չէ որ անշուշտ ձեռնպահ պիտի մնան:

Յեղափոխական խնդիրներու մէջ չեն մտնիր ապրկելով որ կը վախնան: Աս խնդիրին մէջ վախ չիկայ, երբ Թուրքիոյ մեր լիակամ կղերն անգամ շարժելու ճիգ մը կ'ընեն: Սլ ո՞րու պիտի սպասէ ֆիլիպի հարուստը:

Աս գործին մէջ ալ թող իրենց

ողին ցոյց տան նայինք, երիտասարդութիւնը և ամբողջ հասարակութիւնը իրենց հետեւէ:

ՆԵՐՔՈՒՄ

Տարբազգ ամուսնոյս անձնատանութեան վերջ, իմ և հանգուցեալին քեզորդի՛ պր. Յ. Կէմիճեանի խնդրանքով, անշափահաս երկու զաւակներու ժառանգական հաշիւներուն համար, բուժեն կառավարութեան կողմէն խնամակալ ժողով մը կազմուեցաւ հինգ յարգելի և պատուաւոր անձերէ, որոնցմէ մին է և զիրաւունքի՛ մէջ՝ անուանարկել շանչուած ազնիւ պարոնը, որ ցարգ ճշմարիտ վեհաձեռութեամբ մխիթարած է զիս և անշափահաս օրերս՝ նախապէս և բարոյապէս՝ նոյն իսկ ուղղականներէս աւելի: Սատի խղճի պարտք կը համարեմ իմ հրապարակային երախտագիտութիւնս յիշեալ պարոնին յայտնելէ զատ, խնամքէն բողոքել «իրաւունքի» մէջ երեցած շար նախանձէ թելագրեալ զրպարտութեան դէմ:

Սրբուհի Սմարտեան
25 Օգոստոս 1903
Պալաթ

Յ. Գ
Օրինակ մըն ալ «իրաւունքի» զրկուած է:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՁԻ

Ընտրողական ժողովս իր Ե. բողոքի մէջ որոշեց յետագայի Առաջնորդական Պատգամաւորի մը ընտրութեան քուէարկութիւնը մինչ ց ժամանումն հրահանգի Պատրիարքական փոխանորդ Գեր. Վահան Մ. վարդապետ Յակոբեանէ, քուէարկութեան կատարման օրինական ձեւակերպութեանց մասին:

Մեծ աղօթարար
Նախագահ Ընտրողական ժողովոյ
Մարտի ու Ք. Մարտիոսեան
29 Օգոստոս 1903
Վառնա

ՕՏԱՐԱՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ

Հայերու կողմէն հայերու վրայ եղած վերջին քաղաքական սպաննութիւնները վիշտ կը պատճառեն հայ ժողովուրդին բոլոր բարեկամներուն: Ետ մը ամերիկացիներ անմիջապէս ըրին թէ այս դէպքերը ցոյց կուտան, թէ հայերը անընդունակ են իրենք զիրենք կառավարելու: Այս եղրակացութիւնը անարդար է, քանի որ ո՛ր ճիւղերը կը պատահին ամէն ազգերու մէջ, եւ անիրաւութիւն է ամբողջ ազգ մը պատասխանատու բուն մէկ քանի անհատներու գործերուն համար: Այսու հանդերձ հասարակութեան դատելու կերպն է զեռասիկա:

Աս գործին մէջ ալ թող իրենց

